ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Սասունցի Դավիթ>> դյուցազներգության դասավանդման ընթացքում:

Կազմեց՝ Բաբայան Անժելա Դ. (անուն, ազգանուն, հայրանուն)
Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

<<Կապանի N2 ավագդպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստողկազմակերպությանանվանումը)

Կապան 2023թ

Բովանդակություն

1.Տիտղոսաթերթ ----------1

2.Բովանդակություն----------2

3.Ներածություն----------3

3.Գլուխ առաջին՝ **<<ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ>>** ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ-------4-5

Ա. Էպոսի ուսուցման բանալին:---------- 6

4.Գլուխ երկրորդ՝ Հերոսների համակարգը----------6-10

Ա. Դյուցազուններ:

Բ. Ժողովրդի ներկայացուցիչները:

Գ. Քեռի Թորոս, Ձենով Հովհան, Վերգո:

Դ. Նվաճողներ:

Ե. Կանանց կերպարներ:

Զ.Արժեհամակարգ----------11

5.Եզրակացություն----------12

6. Գրականության ցանկ; ----------13

Ներածություն

Ուսուցման գործընթացը դասավանդման և ուսուցման գործընթաց է, որը իրականացնում է ուսուցիչը և այդ ընթացքում աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալ-մշակույթային փորձը, զարգացնում է նրանց ճանաչողական գործունեությունը:Ուսումը աշակերտների կողմից սոցիալական-մշակույթային փորձը, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները զարգացնելու գործընթաց է, որը կարևոր ապահովումն է:Ուսուցման գործընթացը անհնար է առանց ուսուցչի և աշակերտի միաժամանակյա գործունեության: Միջնակարգ կրթության համակարգում գրականությունը առանձնահատուկ տեղ ունի անձի ձևավորման, մրա մտավոր առաջնթացի, վերլուծման և պատկերավոր մտածելության զարգացման, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման համար: Ինչպես Հ. Թումանյանն է ասում. <<Չկա դպրոց առանց գրականության, և չկա գրականություն առանց դպրոցի >>: Գրականությունը պատկերում է մարդուն՝ իր բազմաբովանդակ կյանքով, ամբողջ էությամբ, ուստի գրական երկերի ուսումնասիրման ընթացքում շատ լուրջ ուշադրություն է դարձվում հերոսների, նրանց հոգեկան ներաշխարհի ու գործելակերպի բացատրմանն ու բնութագրմանը: Գրականության ուսուցման ընթացքում աշակերտների մեջ ձևավորվում են ոչ միայն վեհ գաղափարներ, հայացքներ, տեսակետեր, այլև հաստատուն համոզմունքներ, մարդկային լավագույն հատկություններ, գեղարվեստական ճաշակ, գեղեցիկ զգացում, կարճ՝ նրանք դաստիարակվում են բարոյապես և գեղագիտորեն:

<<ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ>>
ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ա գլուխ

<<Սասունցի Դավիթ >> ժողովրդական էպոսը պատկանում է մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերի թվին:

Էպոսի համաշխարհային պատմության մեջ <<Սասունցի Դավիթը>> այն բացառիկ նմուշներից է, որ մարդկությունը հասել է գրի առնվելով անմիջապես ժողովրդական ասացողների բերանից: Այս իմաստով այն մեծ նշանակություն ունի ժողովրդական էպոսի էության վերաբերյալ տեսական ընդհանրացումներ կատարելու գործում: <<Մեր էպոսը,- գրել է Ավ. Իսահակյանը,- գրական մշակման չի ենթարկվել, գրական միջամտություն չի ունեցել նա, որպիսին ունեցել են հունական էպոսը, <<Շահնամեն>>, <<Նիբելունգների երգը>>: Մեր վեպը, այսպիսով, բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է: Այս տեսակետից եզակի նշանակություն ունի նա և ուսումնասիրողների համար՝ անչափելի արժեք: Ինչքա՜ն բազմաթիվ ու բազմատեսակ տարրեր կան այդ բարդ վեպի մեջ –անեմիստական և տոտեմական աշխարհըմբռնման խորունկ հետքեր, կոսմիկական ուժերի՝ բնության տերերքի աստվածացում և անձնավորում, աստվածների մարդեղացում և մարդկանց հերոսացում ու աստվածացում: Նաև քրիստոնեական աշխարհայացքի և մորալի ոչ նվազ ազդեցություն: Նաև հայկական հնագույն պատմության մեծ անեծքի հիշատակներ: Եվ վերջապես, բանստեղծական վիպական վերարտադրությունը միջին դարերի պատմական ռեալ դեմքերի և դեպքերի: Էպոսի երկրորդ պատումի ասացող Նախո քեռու պնդմամբ իր պատմածը ամբողջապես իրական պատմություն է: Մեր օրերի ասացողներից՝ Սասունցի Սաքոն, Սասնա սարերի վրա լրջորեն Դավթի ձիու ոտնահետքերն է ցույց տալիս, իսկ Սասունցի Ֆարմանը ոչ պակաս լրջությամբ՝ նրա կառուցած ջրաղացը և իրեն Դավթի հետնորդն ու ազգակիցը համարում:Ասացող Վարդանը հավատում է

<<Թե Դավթի ցեղը հսկա դևերից է առաջ եկել, և այդ ցեղի մարդիկ ևս հսկա են եղել, այնպես որ այսօրվա մարդիկ նրանց գրպանում կտեղավորվեին >> Կարելի է վկայակոչել շատերին, ասացողների կենսագրած տվյալները հնարավորություն տալիս են , բայց բերածներն էլ բավական են նկատելու, որ այդ հավատը խարսխված է նրանց նաև առասպելական մտածողության վրա, որը էպոսի պահպանման ու անաղարտ փոխանցման կարևոր նախադրյալներից մեկն է : Կ. Մարքսը նշում է, որ <<առասպելությունից անկախ երևակայությունը չէր կարող ամենևին հորինողական գեղարվեստի համար հող հանդիսանալ >>: Այս հիշեցնելով մենք ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ հանրահայտ այդ ճշմարտությունը միանգամայն օրինաչափ է, որ էպոսի պատումները շարունակում են ապրել ու հարատևել ոչ թե նրանց մոտ, որոնք դադարել են էպոսի առասպելական աշխարհին հավատալուց, որոնց երևակայությունը առասպելաբանությունից անկախ երևակայություն է, այլ բացառապես նրանց մոտ, որոնք խորապես հավատում են իրենց պատմածին, որոնց երևակայությունը դեռևս առասպելականությունից անկախ երևակայություն չէ:

Էպոսի լավագույն պատումների հատկանիշները օժտված են ֆոլկրոլում ստեղծագործական պրոցեսի գլխավոր առանձնահատկությամբ՝ կոլեկտիվությամբ, որտեղ աշխարհայացքին, հոգոբանական- անհատական գծերը, որպես կանոն, ետ են մղվում և առաջնային ու իշխողը դառնում է ընդհանուր աշխարհայեցողության, ընդհանուր հոգեբանության արտահայտությունը: Միայն ընդհանուր կնիք ունեցող պատումներն են ամբողջական ու խորն արտացոլում էպոսի առաջավոր գաղափարախոսությունն ու գեղարվեստական ձևերի բազմազանությունը, դրանով իսկ ավելի ու ավելի մոտենում նրա սկզբնական հորինվածքին նրա կոլեկտիվությանը: Ստեղծագործական պրոցեսի այս գլխավոր առանձնահատկության շնորհիվ մեր ասացողները այսքան հարազատ ու բնական են ներկայացնում էպիկական անցյալը, իրենց պարզ ու հասարակ պատմությամբ այնպես են շիկացնում մեր հոգին, որ մենք ակամա վերանում ենք պայմանականությունից և հաղորդակից դառնում իրականությանը: Այդպես են բոլոր խորապես գեղարվեստական- վիպական ստեղծագործությունները, արվեստի կախարդանքին ենթարկված կյանքի բոլոր բնագավառները:

Էպոսի ուսուցման բանալին: Ժողովրդական այս ստեղծագործությունն ազատագրական պայքարի պատմություն է: Իրավացի է Հովհաննես Թումանյանը . <<Էն ժողովուրդները, որոնք աշխարքում ապրել են լայն կյանքով ու բարձր ձգտումներով , միշտ ունեցել են իրենց դյուցազնական ու հերոսական դարաշրջանները՝ լիքը հրաշքներով ու առասպելներով: Ժամանակի ընթացքում սրանք, ի մի հավաքելով իրենց հերոսական դարերի առասպելները և իրենց պատմության մեծ հիշողությունները, հյուսել են իրենց ազգային էպոսը: Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարքի առջև: Ահա հայ ժողուվուրդը՝ խտացած իր ազգային էպոսի՝ <<Սասունցի Դավթի>> մեջ: >> Մտագրոհով փորձում ենք վեր հանել աշակերտների նախնական գիտելիքները: Նրանց մտքերը խմբավորելով՝ կարողաքնում ենք ամբողջացնել էպոսի բնութագիրը: Էպոսը ազգի հավաքական էության հայելին է, ինչպիսին ժողուվուրդն է, այնպիսին էլ էպոսն է: Ճշգրտորեն արտացոլում է ժողովրդի կյանքը: Խորապես ազգային է, պարտադիր է պատմականությունը: Երբ խոսում ենք էպոսի գլխավոր հերոսի՝ Դավիթի մասին, բնութագրում ենք մեր ժողովրդին: Այդպես տարբեր հերոսներ ներկայացնում են իրենց ժողովուրդներին. Աքիլլեսը՝ հույներին, Սիդը՝ իսպանացիներին, Ռոստամ Զալը՝ պարսիկներին:

Հերոսների համակարգը: Սասունցի Դավիթն ունի կերպարների գունագեղ պատկերասրահ: Անհրաժեշտ է, որ աշակերտը կարողանա պատկռերացնել հերոսնորի միջև գոյություն ունեցող կապը և ընկալել համակարգի մեջ:

Ա. Դյուցազուններ : Առաջին հերթին դյուցազունների համակարգն է, սկսվում է առաջին ճյուղի գլխավոր հերոսից՝ Սանասարից: Սանասարը ջրային ծագում ունի, դեռ մանկուց տարբերվում է հասակակիցներից իր ուժով: Անգամ խալիֆը, որ ցանկանում էր սպանել Սանասարին և Բաղդասարին՝ չհավատալով Ծովինարի անմեղությանը ,համոզվում է, որ դանք հասարակ մահկանացուներ չեն: Գործողությունների զարգացման ընթացքում Սանասարը մտնում է ծովը , ձեռք է բերում ջրի հատակից այն ամենը, ինչն իրեն պիտի ապահովեր իր

դյուցազնականությունը և պայմանավորեր հետագա հաղթանակները՝ հրեղեն ձին ,զենք ու զրահը, աստվածային հովանավորությունը՝ Խաչ Պատերազմին:

Սանասարը հենց այնտեղ՝ ծովի հատակում, Քուռկիկ Ձալալիի հետ երկխոսության ժամանակ գիտակցում է իր յուրահատուկ ծագումը: Սանանսարի հերոսական ոգին փոխանցվում է նրա երեք որդիներից միայն մեկին՝ Միերին: Միերը երկրորդ ճյուղի գլխավոր հերոսն էր: Նա հորից ստացել էր ոչ միայն իր ոգու խորհրդանիշները ,այլ նաև Սանանսրի հայրենասիրությունը. Տասնհինգ տարեկան հասակում առանց երկմտելու գնում է առյուծի դեմ կռվելու, որովհետև երկրին սպառնում էր սովը: Միերի վճռականությունը նույնպես գալիս էր հեռվից. նա իր պապերի շարունակությունն է. <<Մեր մեծ պապեր // Մեզ էնպես են խրատ տվե , // Որ թշնամու դեմ ելնելուն պես տի կռվենք… :>> Դավիթը էպոսի ամենասիրելի կերպարն: Միերի նման նա էլ արժանանում էր հայրերից փոխանցված զենք ու զրահին, ձիուն, խմում Կաթնաղբյուրի ջրից, հասունանում ու պատրաստվում գլխավոր կռիվներին, որոնց համար էլ ժողովուրդը ստեղծել է այս կերպարը: Մեկ անգամ էլ հիշենք որ էպոսը ժողովրդի հոգեբանության, մտածելակերպի հայելին է : Դավիթը ժողովրդի ոգին հարազատորեն դրսևորող կերպար է: Դյուցազունների շարքը լրացնում է Փոքր Միերը՝ Սասնա տան վերջին հերոսը, ժողովրդի նվիրական երազների կրողը: Դյուցազունների համակարգին կարելի է դասել ևս մի <<կերպար>>. Նա միշտ հերոսների կողքին է, սովորեցնում ու քաջալերում է նրանց, օգնում խորհուրդներով, մասնակցում կռիվներին, նրանց պես ունի ջրային ծագում: Դա հրեղեն ձին է՝ Քուռկիկ Ձալալին:

Բ. Ժողովրդի ներկայացուցիչները: Կերպարների մյուս համակարգը ժողովրդի ներկայացուցիչներն են՝ Սասնա տան անվանադիր ծերունին, Արտատեր պառավը, արաբ ծերունին:Նրանց կարիքը միշտ զգում են գլխավոր հերոսները հատկապես վճռական որոշումներ ընդունելու ժամանակ: Անհրաժեշտ է աշակերտի համար ևս մեկ անգամ ըմդգծել այն հանգամանքը, որ հայ մարդը միշտ կարևոր նշանակություն է տվել ավագ սերունդի նկատմամբ վերաբերմունքին. Մեծի հանդեպ հարգանքը, նրա խոսքը լսելը մեզ համար ազգային առանձնահատկություն է: Սանասարը գիտակցում է, որ իրենց կառուցվածքը սովորական տուն չէ, ամրոց է: Դա դյուցազուն

սերունդների բնօրրանն է, և անհրաժեշտ է, որ բերդի անունը ճիշտ արտացոլի այդ հոգեբանությունը, և դիմում է հասարակ մարդու խորհուրդին: Եվ շատ կարևոր է, որ

հերոսները, լսելով հասարակ մարդկանց խոսքը, միշտ ճիշտ լուծումներ են գտնում դժվար կացություններից: Այնքան մեծ է տարիքավոր մարդու նկատմամբ հարգանքը, որ Դավիթը կռվի ամենաթեժ պահին ի վիճակի է լինում դադարեցնել արյունահեղությունը և ուշադիր լսել մե՛կ արաբ ծերունու, մե՛կ Իսմիլ Խաթունի խոսքը: Սա էպոսի ուսուցման բանալիներից մեկն է:

Գ. Քեռի Թորոս, Ձենով Հովհան, Վերգո: Կերպարների մյուս խումբը Սասնա ընտանիքին պատկանող, բայց դյուցազնական էություն չունեցող հերոսներն են: Քեռի Թորոսը հայրենասեր է, պատրաստ է կռվել գլխավոր հերոսների կողքին, հաճախ է իր խորհուրդներով օգնում նրանց: Նա կա ամբողջ էպոսի ընթացքում՝ Ծովինարից մինչև Փոքր Միեր: Աշակերտների առանձնացրած հատվածներից երևում է, որ Քեռի Թորոսն իր մեջ ամբողջացնում է ժողովրդի կենսափորձը, հավասարակշռությունը, հարկ եղած դեպքում ազգային հիշողության կրողն է և փոխանցողը: Ժողովուրդը բացասական վերաբերմունք է արտահայտել Միերի եղբայրների նկատմամբ՝քննադատելով մեկի անվճռականությունը (Ձենով Հովհան), մյուսի անբարոյական վարքն ու վախկոտությունը (Վերգո) :

Դ. Նվաճողներ: Հաջորդ համակարգը նվաճողներն են՝ Բղադադի Խալիֆը, Մելիքները, Բապը Ֆրենկը, Աջմու Շապոուհը… Նրանց բոլորին բնորոշ են բռնակալներին հատուկ գծերը. Դաժան են, չար, ատելի անգամ սեփական ժողովրդին:Առանձնանում է երկրորդ Մելիքը: Նա նաև նախանձ է, մեծամիտ և հիշաչար՝ չի ներում փոքրիկ Դավիթին, որ բռնում էիր գուրզը և բոլորովին չի վախենում իրենից: Մելիքը Մեծ Միերի որդին է, բայց դա չի ընդունում, նրա մեջ գերիշխում է տոհմական ժառանգականությունը:

Ե. Կանանց կերպարները: Ժողովուրդը մեծ սիրով կերտել է կանացի կերպարների մի մեծ խումբ , որոնք միշտ գլխավոր հերոսների կողքին են: Այս կանանց հետ խորհրդակցում են, լսում, նրանց համար պայքարում են ու նրանց սիրում: Նրանք խեղճ կանայք չեն՝ կախված տղամարդու կամքից ու քմահաճույքից, այլ նախաձեռնող, ապրելու իրենց սկզբունքներով, իրենց հաստատուն, համառ

Բնավորությամբ,պահանջներով ու պայքարի ունակությամբ: Հրաշալի է Ծովինարը: Նա ոչ միայն չնաշխարհիկ գեղեցկություն ունի, այլ նաև ներդաշնակում է խելամտություն, հաստատակամություն և հատկապես հայրենասիրություն,անձնազոհություն.

Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,

Զամեն տի սպանի իմ պատճառով,

Աղեկն էն է,ե՛ս էրթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի:

Ես մեկ ջանեմ ,էրթամ ,կորսվիմ,

Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,

Էն ազար-հազար հոգիք կորուսանին:

: Պատահական չէ, որ նա դառնում է ընտրյալ (Աստծո կամքով իր համար աղբյուր է բխում) և ապագա Սասնա տան նախամայր: Դեղձուն-Ծամը առաջին օտարազգի հերոսուհին է: Մինչև ամուսնությունը նա կախարդուհի էր, բայց Սանասարը զրկում է նրան հմայելու շնորհից և այնուհետև նա, ընդունելով այն ամենը, ինչը հայկական է, սիրով ու հնազանդությամբ կապվում է Հայաստանին, դառնում ոչ միայն թագուհի այլ Սանասարից հետո՝ տերն ու պաշտպանը: Արմաղանն ի տարբերություն Դեղձուն-Ծամի և Խանդութի, նախաձեռնող չէ ամուսնանալիս , բայց ամուսնանալուց հետո պատվախնդիր է ընտանիքի սրբության հարցում: Բայց ժողովուրդը կարևոր է համարում կնոջ հնազանդությունն ամուսնուն.

Տղամարդ որ կա՝ գլուխ է

Կնիկ որ կա՝ ոտք:

Էն չի կանա դուռ բռնի մարդու վերա…

Մանավանդ որ կար գերխնդիրը՝ Սասնա ժառանգի հարցը: Եվ կրկին ՝ անձնականի ստորադասումը հայրենիքի շահին: Կանանց կերպարների հարցում առանձնահատուկ է Խանդութը: Նա լիովին արժանի է գլխավոր հերոսի՝ Դավիթի սիրուն, և ինքն էլ ինքնամոռաց նվիրվումյ է նրան:

Այս երեք կանայք ծագումով հայ չէին, բայց սիրով ընդունել էին իրենց հայ ամուսիններին և դարձել հայուհի: Նրանք երեքն էլ գրագետ էին: Գոհարը՝ Փոքր Միհրի կինը լրացնում էր դրական հերոսուհիների շարքը: Կան բացասական

հատկանիշներով կանայք :՝ Իսմիլ Խաթունը թշնամու կերպար է՝ նենգ, հեռատես և խորամանկ: Բայց նրա մեջ մայրական բնազդը հաղթում է : Իսմիլը սիրով ու հոգատորությամբ խնամում է Դավիթին նրան փրկում Մելիքի հարձակումներից, իսկ Դավիթը նրան <<մարե>> էր ասում: Բացասական է նաև անսիրտ, խորամանկ, բարոյազուրկ ու գայթակղող Սառյեն:

Ժողովրդական լեզվամտածողությունն ունի խոսքի արտակարգ պատկերավորություն: Բացառիկ ոճական նանակություն ունեն չափազանցությունները, երգիծանքը: Բարեհոգի ծիխաղ է երբ խոսքը սիրելի հերոսի մասին է (Սանասար,Բաղդասար, Դավիթ) և թունոտ սարկազմ, երբ ծաղրվում են բացասական կերպարները (Մելիք, Կոզբադին, արաբ հարկահաններ նաև Վերգոն)

:Քննարկում ենք նաև նախապես աշակերտներին դուր եկած հատվածները.

Միհր կ’երթար, մարդեր կը տփեր, կը ասեր,

-Շան որդիք, ես կամուրջ կապեր եմ ,

Ձե՞զ համար եմ կապե,

Ինչի՞ վեր իմ կամրջին կերթաք:

Արժեհամակարգ

Էպոսի արժեքային համակարգի ամենակարևոր գծերից մեկը մարդասիրությունն է, որի համար էլ մեր էպոսը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվեց լավագույն հումանիստական էպոս: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ խորհուրդը 1964 թվականին որոշել էր ընտրել աշխարհի լավագույն էպոսներն ու մի քանիսը հրատարակել տարբեր լեզուներով : 130 խստապահանջ բանհավաքներից կազմված հանձնաժողովը նախապատվությունը տվեց <<Սասունցի Դավթին>> որովհոտև. <<հոն կա մարդասիրություն, մարդակերություն չկա>>: Օտար նվաճողների դեմ սասունցիների մղած պայքարը էպոսում երբեք չի վերածվում քրիստոնեաների և այլակրոնների պայքարի: Ժողովրդական զանգվածները երբեք թշնամանքով չէին ընկալում օտարի կրոնը:

Հայկակն էպոսում, եթե նույնիսկ մեջտեղ է գալիս ազգային տարբերությունների հարցը, ապա այն լուծվում է ժողովրդական բարոյակոնության ոգով, թև, կոչված լինելով լայնորեն ու համոզիչ կերպով պատկերելու թշնամու նկատմամբ տարած հաղթանակը հերոսական էպոսն իր կոչումով սուբյեկտիվ է:

Մսրա փահլևաններից մեկը նույնիսկ վտամգի պահին մարմնով ծածկում է մանկանը: Հայ բանասացները բարի խոսք չեն խնայել մարդասեր արաբների հասցեին: Հերոսական էպոսը լի է ատելությամբ հայոց հողի թշնամիների նկատմամբ, բայց ոչ արաբների նկատմամբ՝ որպես այդպիսին, որպես ժողովուրդ, ազգ: Հայոց էպոսը ինտերնացիոնալ է և հենց դրա համար է , որ արաբ նվաճողների ու իրենց տունը հողը պաշտպանող հայերի միջև կռիվը էպոսն ի վերջո հանգեցնում է Դավթի ու Մելիքի մենամարտին: Ժողովուրդները չեն ուզում կռվել: Ժողովուրդները իրենց կառավարիչների մեղքով նույնիսկ թշնամություն են անում, ապա երազում են ազատ ու ստեղծագործ կյանքի, աշխարհաշեն աշխատանքի մասին:

Իսկ ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի գնահատականը հետևյալն է. <<Գլուխս կխոնարհեմ ձյունազարդ Մասիսի առջև՝ ի դեմս նորա՝ հայ հանճարեղ ժողովրդի առջև, որի երբևէ ստեղծած փայլատակումներից է <<Սասունցի Դավիթ>> հավերժազրույցը՝ համաշխարհային ժողովրդական էպոսը :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Կրթությունն այն է, ինչ մնում է դպրոցում սովորածը մոռանալուց հետո **>>:** Ալբերտ Էյնշտեյնի այս միտքն էլ ուզում եմ ելակետ ընդունել իմ եզրակացությունը գրելու համար: Արժեհամակարգի հիմքում ձևավորված մարդն է քաղաքացին: Ուսուցման, կրթության արդյունքում կարևորագույնը մարդու մեջ ձևավորված արժեհամակարգն է: Մեր էպոսը այդ առումով լավագույնս է կատարում այդ դերը, եթե այն ճիշտ ու հանգամանորեն է ուսուցանվում: Մեր էպոսը ճչում է կյանքի մասին ու փառաբանում հորդաբուխ, ազատ, հավերժական այդ կյանքը: Մեր էպոսի հերոսականությունը այն բանի մեջ է, որ պաշտպանես սեփական օջախդ : Հերոսականի այսպիսի ընդունումը մարդասիրություն է ենթադրում:Պարտություններ շատ ենք կրել, շատ ենք տրորվել, վիրավորել են մեր ազգային արժանապատվությունը: Եվ այսպես կլինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ուժեղ, զարգացած և ժամանակակից երկիր: Այդ հույսն ու հավատը իր մեջ պահում է մատաղ սերունդը: Մեր պատմահոր դասերով արժեհամակարգ ձևավորած ու կրթված սերունդը, մեր արարչագիր էպոսի արժեհամակարգով կրթված ու դաստիարակված սերունդը, ով չի ենթարկվի ամեն տեսակի ազգակործան գայթակղությունների, ով, հակառակ ժամանակի հողմերի ու փոթորիկների, շարունակում է արմատները մխրճած պահել այս դժվար, բայց արարչական հողի մեջ:

Գրականության ցանկ

1. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Հայոց լեզու և Գրականություն,

2005թ

2. Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ Վանաձոր, 2008 թ.

3. Մ. Մկրյան , Հայ հին գրականության պատմություն, Երևան , 1976 թ.

4. Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, <<Արևիկ>>, 1989 թ.

5. Սասունցի Դավիթ, Էպոսի պատումների հավաքման ու հրատարակման պատմությունից, <<Սովետական գրականություն>> հրատարակչություն, 1977 Թ.

Կազմող՝ Անժելա Բաբայան
Դասարն՝ 10-րդ
Առարկան՝ Հայոց լեզու

Դասի թեման՝ *Վերնագիր և բնաբան*

Դասի նպատակը՝

- ամրապնդել տեքստի կառուցվածի մասին ունեցած գիտելիքները
- ներկայացնել վերնագիրը և բնաբանը՝ որպես տեքստի բաղկացուցիչ տարր

Դասի վերջնարդյունքները՝ կարողանա

- վերնագրել տեքստը
- ՀՊՉ 1) գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին
- ընտրել համապատասխան բնաբան
- ՀՊՉ 14) ճանաչի և պահպանի ակադեմիական ազնվություն տեղեկության աղբյուրներն օգտագործելիս.
- նշել վերնագրի և բնաբանի դերը
- ՀՊՉ 7) քննարկի, հայտնի դիրքորոշում և կատարի գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ.

Դասի խնդիրները՝

- Կազմել ոչ ծավալուն տեքստ և վերնագրել
  Լեզվական կարողունակություն և գրագիտություն
- Վերնագիրը համապատասխանեցնել առաջարկվող տեքստի բովանդակությանը կամ առաջարկվող վերնագրին համապատասխան գրել փոքրիկ շարադրանք
  Սովորել սովորելու կարողունակություն
- Արդեն իսկ վերնագրված տեքստի համար ընտրել նոր վերնագիր
  Կայունություն և փոփոխություն
  Անհատներ և հարաբերություններ
- Գեղարվեստական ստեղծագործությունների համար ընտրել բնաբան:
  Մշակութային կարողունակություն
  Լեզվական կարողունակություն և գրագիտություն

Դասի թեման՝ *Առաջաբան, ներածություն և վերջաբան*

Դասի նպատակը՝

- ամրապնպել տեքստի կառուցվածքի մասին ունեցած գիտելիքները
- ներկայացնել առաջաբանի, վերջաբանի և ներածության տարբերությունը տարբեր ոճի տեքստերում

Դասի վերջնարդյունքները՝ կարողանա

- տարբեր ոճի տեքստերում տեքստում առանձնացնել առաջաբանը և վերջաբանը
- ՀՊՉ 1) գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին.
- նշել ներածության դերը տեքստի ամբողջական ընկալման մեջ
- ՀՊՉ 7) քննարկի, հայտնի դիրքորոշում և կատարի գիտակցված ընտրություն աշխարհաճանաչողության ձևերի վերաբերյալ.

- ՀՊՉ 25) ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ.

Դասի խնդիրները՝

- Տեքստի նշված հատվածի համար տրվածներից առանձնացնել համապատասխան ներածություն, առաջաբան, վերջաբան:
  Կառուցվածք և գործառույթ
- Առաջարկվող հատվածի համար գրել առաջաբան և վերջաբան:
  Օրինաչափություն
- Գրել փոքրիկ շարադրանք՝ առանձնացնելով առաջաբանը
  և նշել տարբեր ոճի տեքստերի առաջաբանների տարբերությունը
  Կառուցվածք և գործառույթ
  Կայունություն և փոփոխություն